ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ո՞ՒՐ Է ՏԱՆՈՒՄ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ԳԱԳԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հոգեբանությունը մի շարք յուրահատկություններով տարբերվում է այլ գիտություններից: Դրանցից հատկանշականը հոգեբանության անընդհատ նորացման ձգտումն է: Այնպիսի տպավորություն է, որ հոգեբանները ասես ոչ թե զբաղվում են իրենց գիտության հիմնախնդիրներով, այլ ամեն անգամ փորձում են հիմքից նորից կառուցել այն: Հոգեբանությունը հայտնվում է անընդհատ նորացման պարբերությունում, որտեղ կորչում է գիտական ինչ-որ ավանդույթ ձևավորելու հնարավորությունը:

Ասվածի վառ օրինակ է մեր ժամանակակից, օնտոհոգեբանության հիմնադիր Անտոնիո Մենեգետիի մոտեցումը: 21-րդ դարասկզբին Բրազիլիայում կարդացած դասախոսության ժամանակ նա հայտարարեց. «Օնտոհոգեբանությունը ծնվել է այն փակուղու գիտակցումից, որով ավարտվում են մարդկային հազարամյա պատմության ընթացքում եղած բոլոր ուսումնասիրությունները»[1]:

Սակայն պատմությունը կասկածի տակ է դնում Մենեգետիի «լավատեսությունը»: Բանն այն է, որ նա առաջինը չէր, որի հայեցակարգը հավակնում էր հոգեբանական միտքն ուղղորդող փարոսի, հոգեբանության կառույցն իր վրա ընդունելու պատրաստ հիմքի դերի: 1985 թ. հրատարակված «Ուղեղից անդին» աշխատության մեջ տրանսպերսոնալ հոգեբանության հիմնադիրներից մեկը՝ Ստանիսլավ Գրոֆը, նշում է. «Բացարձակապես պարզ է, որ հին գիտական մոդելներն ի վիճակի չեն բավարար լուծումներ տալ հումանիտար այն խնդիրներին, որոնց հետ մենք առնչվում ենք անհատական, հասարակական, ինտերնացիոնալ և գլոբալ մասշտաբներում»[2]: Գրոֆը հավատում էր, որ տրանսպերսոնալ հայեցակարգը, ի տարբերություն գիտական հին մոդելների, մեր օրերում կարող է բավարարել արդի հումանիտար պահանջները:

Իր հայեցակարգի մասին նմանատիպ կարծիքի է հումանիստական հոգեբանության ներկայացուցիչ Աբրահամ Մասլոուն: «Գոյության հոգեբանություն» գրքի երկրորդ հրատարակության նախաբանում, հումանիստական հոգեբանությունը համարելով մեխանիստա-

[1] **Менегетти А.** Учебник по онтопсихологии. М., 2007, с. 107.
[2] **Гроф С.** За пределами мозга. М., 1993, с. 43.

կան բիհեիորիզմի և պահպանողական ֆրոյդիզմի այլընտրանք, նա գրում է. «Պետք է խոստովանեմ, որ չեմ կարող չմտածել հոգեբանական այս նոր ուղղության մասին որպես հեղաշրջման՝ բառիս ճշմարիտ և նախասկզբնական իմաստով, ինչպես կարելի է հեղաշրջում անվանել Գալիլեյի, Դարվինի, Էյնշտեյնի, Ֆրոյդի և Մարքսի գործերը, որոնք ձևավորեցին մտածողության և ընկալման նոր ձևեր, ստեղծեցին մարդու և հասարակության նոր տեսլականներ, մշակեցին բարոյական նոր հայեցակարգեր, ցույց տվեցին առաջխաղացման նոր ուղղություններ»[3]:

Դժվար չէ նկատել, որ նորացման, հեղաշրջումների այս մոլուցքը հոգեբանության բնագավառում չի տալիս ցանկալի արդյունքներ: Ընդհակառակը, այն հետագա նորացման, հեղաշրջման պարարտ հող է: Այս երևույթը, թերևս, ինքնին բացասական չէ: Եթե հոգեբանության գիտական դաշտը դիտարկենք որպես մարզադաշտ, որտեղ գիտնականները մրցում են՝ փորձելով ցույց տալ իրենց խորաթափանցությունը, սրամտությունը, տրամաբանելու ու փաստարկելու կարողությունը և արժանանալ դափնիների, իհարկե ամեն անգամ հայտնվելու է մեկը, ով փորձելու է ցույց տալ, որ հենց իր տեսությունն է արժանի մրցանակի: Սակայն եթե հոգեբանությունը կոչված է լուծելու որոշակի խնդիրներ, և այդ նպատակով կրթության միջոցով պատրաստելու համապատասխան մասնագետներ, ուրեմն անհրաժեշտ է հրաժարվել անընդհատ նորացման և հեղաշրջումների մրցակցությունից՝ փորձելով կանգնեցնել հոգեբանության զարգացման ընթացքը: Միայն այսպես է հնարավոր ստեղծել հոգեբանական քիչ թե շատ հաստատված ավանդույթ, որի շնորհիվ կարելի կլինի տարբեր սերունդների միջև երկխոսություն ապահովել:

Թերևս շատերին այս պնդումը տարօրինակ թվա: Չէ՞ որ հոգեբանությունը գիտություն է, իսկ գիտության համար զարգացումն ու առաջընթացը կարևոր հատկանիշներ են: Իհարկե դրանք չափազանց կարևոր են, բայց եթե կան: Բանն այն է, որ բավականին դժվար է որոշել հոգեբանական նոր տեսության կամ հայեցակարգի նորարարական արժեքը: Խոսքը ոչ միայն գիտելիքի նորության, այլև դրա անհրաժեշտության մասին է: Ինչո՞վ էր պայմանավորված և արդյո՞ք անհրաժեշտ էր օնտոհոգեբանական, տրանսպերսոնալ հոգեբանական, հումանիստական հոգեբանական կամ մեկ այլ հոգեբանական հայեցակարգի առաջացումը:

Եթե փորձենք նոր հոգեբանական հայեցակարգերն ու տեսությունները գնահատել դրանց օգտակարության տեսանկյունից, ապա ստիպված կլինենք խոստովանել, որ դրանք նախորդող տեսությունների համեմատությամբ ոչ մի բանով էականորեն աչքի չեն ընկնում: Բանն այն

[3] **Маслоу А.** Психология бытия. М., 1997, с. 5.

է, որ մարդկային քաղաքակրթության զարգացման բոլոր ժամանակաշրջաններում ինչ-որ ձևով լուծվել են այն խնդիրները, որոնք լուծելու պարտականությունը մեր օրերում դրված է հոգեբանության վրա: Ընդ որում, դրանք լուծվել են քիչ թե շատ հաջողությամբ, և մենք համոզված չենք, որ հոգեկան ոլորտի խնդիրների լուծման ժամանակակից մեթոդներն այս առումով ինչ-որ առավելություն ունեն նախորդների նկատմամբ: «Եթե մեկը որոշի, - գրում է Վիտգենշթայնը, - որ բացահայտել է կյանքի գաղտնիքը և ինքն իրեն ասի, թե այսուհետև ամեն ինչ լինելու է հեշտ ու պարզ, որպեսզի նա հասկանա, որ սխալվում է, նրան իրականում պետք է ընդամենը հիշել, որ կային ժամանակներ, երբ նրա «հայտնագործությունը» չկար, բայց այդպես էլ կարելի էր ապրել, իսկ նրա հայտնագործությունը նախկին իրավիճակի համեմատ բացարձակապես պատահականություն է»[4]:

Հոգեբանական տեսություններ ստեղծողները երբեմն մոռանում են այս մասին և իրենց ստեղծագործությունը հռչակում են իբրև մարդկությանը հազարամյակներ շարունակ տանջող բազմաթիվ հարցերի պատասխան: Դժվար է, իհարկե, համոզված ասել, թե ինչպես էին մարդիկ նախկինում կարողանում գոյատևել առանց այդ տեսության: Մի բան, սակայն, հաստատ է. նրանք գոյատևում էին: Եվ որ ամենահետաքրքիրն է, նրանք ունեին իրենց կենսապահովման բոլոր անհրաժեշտ, այդ թվում նաև հոգեբանական բաղադրիչները: Կարելի՞ է արդյոք ենթադրել, թե հին շամանի կախարդանքները քիչ օգտավետ էին, քան ժամանակակից հոգեբանի աշխատանքը: Եվ ժամանակակից ո՞ր հոգեբանի մասին են ասվել այսպիսի խոսքեր. «Ի նպաստ մարդկանց՝ Ֆոյբոսը ծնեց և՛ Պլատոնին, և՛ Ասկլեպիոսին. նա՝ հոգու բուժակ, սա՝ մարմնի»[5]:

Կարելի է, իհարկե, առարկել՝ ասելով, թե քաղաքակրթության զարգացմանը զուգընթաց՝ փոփոխվում են նաև մարդու կենսաշխարհի պայմանները, նրա հոգեկան դրսևորումները, խնդիրները, հետևաբար ամեն ժամանակաշրջան պետք է ստեղծի իր հոգեբանությունը: Այս դեպքում, սակայն, մենք կորցնում ենք հոգեբանությունը որպես գիտություն: Ինչը ճիշտ է տարբեր ժամանակաշրջանների համար, ճիշտ է նաև տարբեր տարածաշրջանների առումով: Հետևաբար, ամեն առանձին երկիր, մարզ, գյուղ կարող է ունենալ իր հոգեբանությունը, քանի որ ունի յուրահատուկ կենսամիջավայր, որտեղ մարդու վրա ազդում են յուրատիպ գործոններ: Բայց չէ՞ որ գիտության նպատակն ընդհանուր օրինաչափությունների բացահայտումն է: Իհարկե, այդ օրինաչափություններն ու դրանցից բխող տեխնիկաները կարող են հարմարեցվել ոչ միայն տարբեր տարածաշրջանների, այլև յուրաքանչյուր առան-

[4] **Витгенштайн Л.** Культура и ценность. О достоверности. М., 2010, с. 27.

[5] **Диоген Лаэртский.** О жизни, учениях и изречениях знаменитых философов. М., 1979, с. 163.

ձին դեպքի պայմաններին, բայց որ հոգեբանությունը պետք է ունենա մեկ՝ ժամանակաշրջանային և տարածաշրջանային պայմաններից անկախ ընդհանուր կառույց, անվիճելի է, եթե, իհարկե, հոգեբանությունը ցանկանում է ինչ-որ կերպ լինել:

Այսպիսով, գիտության զարգացումը հասարակության կենսական պահանջների կամ կյանքի որակի հետ կապելը նվազագույնը միամտություն կլինի: Սկզբունքորեն հնարավոր չէ համեմատել հնադարյան վայրենի մարդու և ժամանակակից քաղաքակիրթ մարդու կյանքի որակները: Միակ բանը, որ համոզվածության ինչ-որ չափաբաժնով կարելի կլինի ասել, այն է, որ երկուսն էլ կյանք են ապրել: Բայց թե որ մեկի կյանքն է ավելի կյանք, հնարավոր չէ որոշել: Հետևաբար, եթե անգամ գիտությունը և մասնավորապես հոգեբանությունը զարգանում են հասարակական պահանջների փոփոխմանը զուգընթաց, մեթոդաբանորեն անհնար է գտնել և ինչ-որ կերպ հիմնավորել այդ կապը:

Այդ դեպքում միգուցե գիտության զարգացումն ինքնանպատա՞կ է: «Ես պնդում եմ, - գրում է Պոպերը, - որ անընդհատ աճը էական է գիտական գիտելիքի ռացիոնալ և էմպիրիկ բնույթի համար, և եթե գիտությունը դադարի աճելուց, այն կկորցնի այդ բնույթը: Հենց աճի ձևն է գիտությունը դարձնում ռացիոնալ և էմպիրիկ: Դրա հիման վրա գիտնականները տարբերակում են գոյություն ունեցող տեսությունները և ընտրում դրանցից լավագույնը կամ (բավարարող տեսության բացակայության դեպքում) առաջ են քաշում առկա բոլոր տեսությունները մերժելու հիմքեր՝ ձևակերպելով որոշակի պայմաններ, որոնց պետք է բավարարի ընդունելի տեսությունը»[6]:

Եթե փորձենք հոգեբանության անընդհատ նորացման շարքը բացատրել գիտության զարգացման ներքին անհրաժեշտությամբ, ապա պետք է նախ գտնել այդ իսկ անհրաժեշտության հիմքում ընկած գործոնները: Ի՞նչն է ստիպում հոգեբաններին, հրաժարվելով նախկին հայեցակարգերից, ստեղծել նորը: Այս հարցին հնարավոր է պատասխանել երկու ձևով՝ կա՛մ նոր, մինչ այդ անհայտ փաստը, կա՛մ հայտնի փաստերի կամ փաստերի համալիրի նախկին մեկնաբանությունների անբավարարությունը: Առաջին դեպքում խոսքը գիտության փաստական ծավալի ընդլայնման, երկրորդ դեպքում տեսական բովանդակության փոփոխման մասին է: Այս երկու տարբերակներից որո՞վ կարելի է հիմնավորել հոգեբանության զարգացման ընթացքը:

Այս առումով բավականին հետաքրքրական լուծում կարող է առաջարկել գիտության զարգացման կունյան հայեցակագը: Կունի կարծիքով՝ գիտությունը զարգանում է հեղաշրջումների շնորհիվ, որոնց հիմքում ընկած է որոշակի անկանոնություն և նախկին տեսությամբ այդ անկանոնությունը մեկնաբանելու անհնարինության գիտակցու-

---

[6] **Поппер К.** Предположения и опровержения: Рост научного знания. М., 2004, с. 359-360.

մը[7]: Այստեղ, սակայն, առաջ են գալիս մի շարք խնդիրներ: Այս տեսությունը կիրառելի է միայն գծային զարգացում ունեցող գիտությունների համար: Ֆիզիկայում, օրինակ, մի հարացույցը կարող է փոխարինվել մյուսով, քանի որ ժամանակի տվյալ պահին գերակշռում է հենց այդ՝ առաջին հարացույցը, որը չի ներառել անկանոնության հիմքում ընկած երևույթը և, հետևաբար, ի վիճակի չէ բացատրելու դրանից առաջացած անկանոնությունը: Ընդ որում, վերջինս որպես այդպիսին որակվում է հենց հարացույցի տեսանկյունից: Այն ինքնին ինչ-որ արտառոց, գերբնական բան չէ, այլ ընդամենը հարացույցի շրջանակներից ինչ-ինչ պատճառներով դուրս մնացած երևույթ: Իհարկե հնարավոր են նաև այնպիսի դեպքեր, երբ իսկապես գիտական հայտնագործության շնորհիվ հայտնաբերվեն այնպիսի փաստեր, որոնք սկզբունքորեն չէին կարող հայտնի լինել գերակայող հարացույցի ձևավորման ժամանակաշրջանում: Դա կարող է պայմանավորված լինել հետազոտության գործիքակազմի զարգացմամբ: Օրինակ՝ Գալիլեյի հայտնագործություններից մի քանիսը կապվում են հենց հեռադիտակի ստեղծման հետ: Առանց այդ հետազոտական գործիքի հնարավոր չէր անել մի շարք հայտնագործություններ, և, քանի որ նախկին հայեցակարգերը կառուցվում էին հեռադիտակի բացակայության պայմաններում, բնական է, որ դրա կիրառմամբ ստացված փաստերը չէին կարող նկարագրվել կամ բացատրվել դրանցով: Այստեղ անհրաժեշտ է տարբերակել անկանոնության և նախկին հարացույցի փոխհարաբերության երկու հնարավոր տարբերակ: Կունյան տարբերակում նախկին հարացույցն ի վիճակի չէ իր ունեցած մեթոդաբանական և տեսական գործիքակազմով մեկնաբանել նոր փաստը, ուստի վերջինս ստանում է անկանոնության կարգավիճակ ու ստիպում վերանայել նախկին հարացույցը: Բայց չէ՞ որ հարացույցը փաստը չէ, այլ դրա մշակված մեկնաբանությունն է, այսինքն՝ գիտելիքի, նախասահմանումների, կանխադրույթների համակարգ: Այս դեպքում ստացվում է, որ փաստը հակադրվում է գիտելիքին:

Սակայն անկանոնությունը կարելի է հասկանալ նաև այլ ձևով: Այս դեպքում որպես անկանոնություն դիտարկվող փաստը հակադրվում է ոչ թե հարացույցին, այլ դրա հիմքում ընկած մեկ այլ փաստի: Ասվածը հասկանալի դարձնելու համար բերենք կոպեռնիկոսյան հեղաշրջման օրինակը: Երկրակենտրոն համակարգում երկնային բոլոր մարմինները պտտվում են Երկիր մոլորակի շուրջը: Սակայն Կոպեռնիկոսը ցույց տվեց, որ մոլորակների պտույտի կենտրոնը ոչ թե Երկիրն է, այլ Արեգակը: Կունյան հայեցակարգն աշխատում է միայն այն դեպքում, երբ առաջին պնդումը դիտարկվում է որպես գիտելիք, երկրորդը՝ որպես փաստ: Այսինքն՝ փաստը չի համապատասխանում գի-

[7] Տե՛ս **Кун Т.** Структура научных революций. М., 2003, էջ 83-128:

տելիքին: Իհարկե, այդ երկու պնդումն էլ բխում է այլ փաստերից, որոնց հիմնավորվածությամբ էլ որոշվում է, թե դրանցից որն է առավել համապատասխանում իրականությանը: Մեզ համար, սակայն, կարևոր է այն, որ գիտության զարգացման տեսանկյունից արդեն առկա, ձևավորված գիտելիքը դիտարկվում է որպես անկանոնության ազդեցությամբ փոփոխման ենթակա ինչ-որ բան: Այսինքն՝ առավելություն է տրվում փաստին: Բայց չէ՞ որ ցանկացած փաստ մեզ հայտնի է դառնում որպես գիտելիք: Ստացվում է, որ հարացույցի և անկանոնության հարաբերությունները կարելի է հասկանալ երեք ձևով: Մի դեպքում անհամապատասխանությունը տեղ է գտնում երկու գիտելիքի միջև, այսինքն՝ հակադրվում են տիեզերքի մասին պատկերացումները. մի կողմից, որ երկնային մարմինները պտտվում են Երկրի շուրջը, մյուս կողմից, որ մոլորակները պտտվում են Արեգակի շուրջը: Երկրորդ դեպքում անհամապատասխանությունը տեղ է գտնում գիտելիքի և փաստի միջև: Այսինքն՝ մենք գիտենք, որ բոլոր երկնային մարմինները պտտվում են Երկրի շուրջը, բայց փաստերը ցույց են տալիս, որ մոլորակները պտտվում են Արեգակի շուրջը: Եվ վերջապես երրորդ տարբերակը՝ անհամապատասխանության մեջ են գտնվում երկու փաստեր. առաջին փաստը, որ երկնային բոլոր մարմինները պտտվում են Երկրի շուրջը, երկրորդ փաստը, որ մոլորակները պտտվում են Արեգակի շուրջը:

Հասկանալի է, որ երրորդ տարբերակի հնարավորությունը միանգամից մերժվում է: Իրականությունը՝ որպես իրական փաստերի ամբողջություն, չի կարող լինել հակասական (թեև այս դատողությունն a priori է, այսինքն՝ չի բխում փորձից, այդուհանդերձ այն ընկած է բոլոր էմպիրիկ գիտությունների հիմքում): Իրականում կարող է լինել երկու տարբերակներից միայն մեկը. կա՛մ Արեգակն է երկնային մյուս մարմինների հետ միասին պտտվում Երկրի շուրջը, կա՛մ Երկիրը՝ որպես մոլորակ՝ Արեգակի: Իհարկե, միկրոաշխարհի ֆիզիկան՝ քվանտային մեխանիկան, բախվեց փաստերի հակասականության երևույթին, այդուհանդերձ այն նույնպես փորձում էր այդ հակասականությունը հիմնավորել դիտման առանձնահատկություններով:

Առաջին տարբերակը, երբ անկանոնությունը դիտարկվում է որպես երկու տեսությունների (արդեն ձևակերպված ու գործառող տեսության և անկանոնությունը որպես այդպիսին ներկայացնող տեսության) անհամապատասխանության արդյունք, գիտությունը վերածում է փորձից անկախ նախաձեռնության, որտեղ կարևոր են ոչ թե իրական փաստերը, այլ դրանց գիտական մեկնաբանությունները: Եթե անգամ գիտական կառուցումներն ունեն փաստացի հիմք, այդուհանդերձ այստեղ կարևորվում է ոչ թե տեսության և փաստի համապատասխանությունը, այլ տեսության արդյունավետությունը, այսինքն՝ թե որքանով է տեսությունն օգնում արդյունավետ լուծելու գիտական

և կիրառական մի շարք խնդիրներ կամ որքան ավելի շատ փաստեր է ներառում:

Ժամանակակից գիտության ընդգծված էմպիրիստական միտվածությունը կարծես ստիպում է, որ գիտության զարգացումը նկարագրվի անկանոնությունը հասկանալու երկրորդ տարբերակով: Այսինքն՝ ժամանակի ընթացքում ձևավորվում է գիտելիքի որոշակի համակարգ, որն ամրապնդվում է որպես հարացույց: Այն չի կարող ներառել բոլոր հնարավոր փաստերի մեկնաբանությունները, հետևաբար փորձի մեջ բախվելով որևէ նոր փաստի, որը դուրս է նրա տեսական մեկնաբանությունների դաշտից, այսինքն՝ հանդես է գալիս որպես անկանոնություն, այն դադարում է բավարարել գիտական գործունեության պահանջները, և առաջ է գալիս հարացույցի փոխարինման անհրաժեշտություն:

Եթե փորձենք այս տեսանկյունից դիտարկել հոգեբանությունում նոր գիտելիքի հնարավորության խնդիրը, ապա պարզ կդառնա, որ հոգեբանությունը՝ որպես գիտական բնագավառ, էականորեն տարբերվում է բնական գիտություններից, և դրա զարգացումը չի ենթարկվում նույն օրինաչափություններին: Նախ՝ այստեղ զուգահեռաբար գոյակցում են մի քանի հարացույցներ: Դա նշանակում է, որ դրանց փաստական լրակազմը էականորեն տարբերվում է. դրանցից յուրաքանչյուրը ներառում է փաստերի յուրահատուկ համալիր, որը չի համընկնում մյուս հարացույցի փաստերի լրակազմին: Այսինքն՝ եթե ինչ-որ փաստ հոգեբանական որևէ հարացույցի տեսանկյունից դիտարկվում է որպես անկանոնություն, դա դեռևս չի նշանակում, որ մեկ այլ հարացույցի շրջանակներում այն չի ստանում համապատասխան մեկնաբանություն:

Այնուհետև, հոգեբանության առարկան՝ հոգեկանը, մեծ մասամբ հիպոթետիկ է, այսինքն՝ այն տրվում է ոչ թե անմիջականորեն, այլ երևում է իր դրսևորումներում, որոնցից էլ հենց ենթադրվում է դրա գոյությունը: Կարելի է, իհարկե, ասել, որ հոգեկան իրականությունը մեզ անմիջականորեն տրված միակն է, և որ դա հոգեկան երևույթների առանձնահատկությունն է[8]: Այդուհանդերձ, այս դեպքում մենք ստիպված կլինենք սահմանափակվել միայն ընթացիկ գիտակցության երևույթներով, քանի որ դրանց հիմքում ընկած հոգեկան գործընթացները, ինչպիսիք են հիշողությունը, երևակայությունը, մտածողությունը, սկզբունքորեն անհասանելի են դիտմանը և բխեցվում են միայն դրանց ենթադրական գործունեության արդյունքներից: Հիշողությունը, օրինակ, որի գոյությունը կարծես թե չպետք է կասկած հարուցեր, մեզ տրված է ոչ այլ կերպ, եթե ոչ միայն ժամանակի տվյալ պահին որոշա-

[8] Տե՛ս օրինակ, **Шпет Г. Г**. Philosophia Natalis. Избранные психолого-педагогические труды. М., 2006, էջ 160:

կի բովանդակություն արտահայտելու ձևով: Մենք կարող ենք միայն ենթադրել, որ այդ բովանդակությունը մտապահվել և պահպանվել է մեր հիշողության մեջ, քանի որ հակառակ պարագայում այն հնարավոր չէր լինի վերարտադրել: Բայց նույն կերպ կարող ենք նաև ենթադրել, թե ժամանակի տվյալ պահին մեր հոգեկանն ընդամենը ստեղծում է այդ բովանդակությունը՝ դրան տալով նախկինում տեղ գտածի կարգավիճակ, և մեր ամբողջ անցյալն ընդամենը մեր ընթացիկ գիտակցության ստեղծածն է: Ակնհայտ է, որ երկրորդ տեսակետը մեզ հանգեցնելու է սոլիպսիզմի, ինչը, անշուշտ, չի խրախուսվի ժամանակակից գիտական հանրության կողմից: Այդուհանդերձ, պետք է խոստովանել, որ հիմնավորվածության առումով երկրորդ տեսակետը չի զիջում առաջինին, ըստ որի՝ մեր հոգեկանն ընդունակ է ընկալելու, մտապահելու և հետագայում վերարտադրելու մեր իսկ փորձառության բովանդակությունները: Սա կարող է նշանակել, որ հոգեբանության բնագավառում մենք գործ ունենք ոչ թե փաստի, այլ փաստի մեկնաբանության հետ: Միակ փաստը, որը տրված է հոգեբանական հետազոտությանը, ինքնաանդրադարձի ընդունակությամբ օժտված ինչ-որ իրականության առկայությունն է, որը դեռևս Դեկարտի ժամանակներից անվանվում է գիտակցություն: Հոգեբանությունը (կամ գոնե Դեկարտին հաջորդած հոգեբանությունը) սկսվում է հենց այս փաստից, իսկ հոգեբանական տեսություններն ու հայեցակարգերն ընդամենը այդ փաստի տարբեր մեկնաբանություններն են:

Դա նշանակում է, որ հոգեբանությունը և դրա զարգացումը չի կարելի դիտարկել էմպիրիկ գիտությունների օրինակով: Միակ փաստը, որի վրա էլ հենց հիմնվում է հոգեբանությունը, ինչ-որ բովանդակության անմիջականորեն տրված լինելու փաստն է, մնացած ամենն այդ իսկ փաստի մտածական մեկնաբանություններն են: Ընդ որում, այս փաստը սկզբունքորեն վիճարկելի չէ: Իհարկե կարելի է այդ բովանդակությունն անվանել գիտակցություն, զուտ փորձ կամ մեկ այլ բան, սակայն դրանից նրա էությունը չի փոխվի: Հենց այդ բովանդակության մեկնաբանություններն են տալիս հիշողության, մտածողության և այլ հոգեկան գործընթացների մասին պատկերացումներ կազմելու հնարավորություն: Մեկ այլ փաստ հոգեբանին տրված չէ:

Ասվածից կարելի է եզրակացնել, որ հոգեբանության բնագավառում սկզբունքորեն հնարավոր չեն անկանոնություններ այն իմաստով, ինչ իմաստով դրանք հանդիպում են բնագիտության մեջ: Այսինքն՝ չի կարող լինել այնպիսի հոգեբանական փաստ, որը կհակադրվի արդեն ձևավորված հոգեբանական գիտելիքին. զուտ մի պատճառով, որ ուղղակի չի կարող լինել մեկ այլ հոգեբանական փաստ, քան հոգեկան բովանդակության անմիջական տրվածության փաստը: Մնացած ամենը զուտ մտածական գործունեության արդյունք է:

Հետևաբար, հոգեբանության բնագավառում զարգացումը տեղի է

ունենում տեսությունների հակադրության ճանապարհով, այսինքն՝ նույն հիմնական փաստին տրվում են տարբեր մեկնաբանություններ: Օրինակ՝ գիտակցության հոգեբանությունը հետազոտում է միայն գիտակցության երևույթները: Անգիտակցականը ոչ թե հայտնի չէ նրան, այլ ուղղակի դուրս է թողնվում, քանի որ հոգեկան գործընթացների բացատրությունը չի զգում դրա անհրաժեշտությունը: Դիտարկելով իր ժամանակներում որպես անգիտակցական հոգեկանի գոյության ապացույց ծառայող հիմնավորումները՝ Ֆրանց Բրենթանոն հանգում է այն եզրակացության, որ անգիտակցական հոգեկանի գոյության մասին հարցին պետք է տրվի բացասական պատասխան[9]: Ի տարբերություն նրա՝ Ֆրոյդը հստակորեն նշում է, որ անգիտակցական հոգեկանի ընդունումը բխում է որոշակի անհրաժեշտությունից, այն է՝ հոգեկան որոշ գործողությունների բացատրության համար անհրաժեշտ է ընդունել դրանց հիմքում ընկած, սակայն չգիտակցվող այլ գործողությունների առկայությունը[10]: Այդուհանդերձ, Ֆրոյդն ընդունում է, որ «Մեր ամբողջ գիտելիքները կապված են գիտակցության հետ: Նույնիսկ անգիտակցականը մենք կարող ենք ճանաչել այն գիտակցական դարձնելու ճանապարհով»[11]: Ստացվում է, որ անմիջականորեն ճանաչելի միակ իրականության՝ գիտակցության հետազոտությունը կարող է տալ լրիվ հակադիր կարծիքների ստեղծման հնարավորություն. Բրենթանոն և Ֆրոյդը շատ դեպքերում խոսում են նույն փաստերի մասին, մեկը՝ անգիտակցական հոգեկանի գոյությունը հերքելու, մյուսը՝ հիմնավորելու նպատակով:

Ասվածից կարելի է եզրակացնել, որ հոգեբանության բնագավառում բավականին դժվար է խոսել զարգացման և առավել ևս առաջընթացի մասին: Եթե ընդունենք, որ հոգեբանությունում սկզբունքորեն հնարավոր չեն այնպիսի փաստեր, որոնք նախկինում չէին կարող հայտնի լինել և հանդես են գալիս որպես անկանոնություն, ապա պարզ կդառնա, որ հոգեբանության փաստական ծավալը չի կարող ավելանալ, այսինքն՝ հոգեբանության զարգացումը չի կարող ընթանալ այս ուղղությամբ: Հոգեբանությունը զարգանում է համարյա անփոփոխ մնացող փաստական ծավալի մեկնաբանությունների տարբերության շնորհիվ: Յուրաքանչյուր նոր հայեցակարգ նորովի է մեկնաբանում նույն փաստերը: Միգուցե դա է պատճառը, որ հոգեբանությունը ժամանակ առ ժամանակ վերադառնում է նախկին գաղափարներին: Այս ամենը ստիպում է մեզ խոստովանել, որ հոգեբանական բազմաթիվ տեսություններ կառուցվում են հին, բայց որոշակիորեն մոռացված,

---

[9] Տե՛ս **Brentano F.** Psychologie vom empirischen Standpunkte. Erster Band, Leipzig, Verlag von Duncker & Humbolt, 1874, էջ 180:

[10] Տե՛ս **Freud S.** Das unbewusste. // **Freud S**. Gesammelte Schriften. Fünfter Band. Internationaler Psychoanalytischer Verlag, Leipzig,Wien, Zürich, 1924, էջ 481:

[11] **Фрейд З.** Я и Оно. М., 1990, с. 17.

չշրջանառվող գաղափարների վերածնության ճանապարհով: Այս երևույթի նկարագրության համար Ջիան Սարուփը կիրառում է հին գինին նոր շշերում այլաբանությունը: Զիգմունդ Կոխի կարծիքով՝ ժամանակակից հոգեբանությունն ընդամենը վերադարձնում է մոռացված գաղափարներն ու թեմաները[12]: Այսինքն՝ հոգեբանության նորացումը հնարավոր չէ հիմնավորել նաև գիտական անհրաժեշտությամբ, այն է՝ այնպիսի փաստի առկայությամբ, որի բացատրությունը նախկին տեսություններում ու հայեցակարգերում իսպառ բացակայում է, և հիմա անհրաժեշտ է ինչ-որ կերպ մեկնաբանել այն: Հոգեբանությունում այսպիսի ոչ մի բան չկա:

Հոգեբանության զարգացման միակ հնարավոր տարբերակը մնում է միևնույն փաստական հենքի վրա զուտ մտածական ճանապարհով հոգեբանական գիտելիքի կառուցման տարբերակը: Այսինքն՝ հոգեբանությունը կարող է զարգանալ միայն տեսական բովանդակության լայնացման ճանապարհով՝ համեմատելով և համակարգելով տարբեր ժամանակաշրջաններում տեղ գտած հոգեբանական տեսություններն ու հայեցակարգերը, գտնելով դրանց ընդհանրություններն ու տարբերությունները: Այս ճանապարհով երևի թե հնարավոր կլինի ստեղծել այնպիսի հոգեբանական համակարգ, որը կներառի հոգեբանական հիմնական տեսությունների ու հայեցակարգերի տեսական բովանդակությունը, թույլ կտա առավել համակողմանի բացատրել և ներկայացնել հոգեկան իրականության բնույթը, առավել արդյունավետ լուծել հոգեբանության առջև ծառացող տեսական և կիրառական խնդիրները:

Բանալի բառեր – *հոգեբանության զարգացում, հարացույց, անկանոնություն, փաստ, գիտության փաստական ծավալ, գիտության տեսական բովանդակություն*

ГАГИК ПЕТРОСЯН – ***Куда ведёт развитие психологии?*** **–** Развитие психологического знания – одна из центральных проблем психологии. В статье показано, что психология не может развиваться тем же путём, что и эмпирические науки. В психологии невозможны аномалии, т. е. факты, способные изменить психологические теории и концепции. Новые психологические теории порождает не объём фактов, а изменение теоретического содержания науки. Все теории в психологии исходят из одних и тех же фактуальных данных. Различаются лишь их объяснения в разных теориях и концепциях. Следовательно, единственным путём развития психологии является теоретическое развитие – интеграция и обобщение психологического знания.

Ключевые слова: *парадигма, аномалия, факт, фактуальный объём науки, теоретическое содержание науки*

---

[12] Տե՛ս **Rappard J.F.H. van,** History in Psychology. // Psychologie und Geschichte, 4, 1993, էջ 187-196:

GAGIK PETROSYAN – *Where Does the Development of Psychology Lead?* – The problem of development of psychological knowledge is one of the central methodological problems of psychology. In the paper, the author shows that psychology cannot develop by means of the development of empirical sciences. In psychology, anomalies are not possible, i.e. such facts under the influence of which psychological theories and concepts would change. New psychological theories emerge not by increasing the factual volume, but by changing the theoretical content of science. All theories in psychology proceed from the same factual data. Only the explanations given to this data in different psychological theories and concepts do differ. Therefore, the only way to develop psychology, according to the author, is theoretical development - integration, and generalization of psychological knowledge.

Key words: *development of psychology, paradigm, anomaly, fact, factual volume of science, theoretical content of science*